ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԱՐՔԸ ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԺԵՑՈՒ «ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

Հայ պատմիչների՝ գրեթե համատարած հոգևորական լինելու հանգամանքը վճռական դերակատարություն է ունեցել նաև պատմագրության ժանրային օրինաչափությունների ձևավորման վրա: Բացի այն, որ ինտերտեքստուալ հարաբերությունների առումով ամենասերտ առնչակցությունները երևանվում են Աստվածաշնչի հետ[1], հայ պատմագրության ժանրային նկարագրի վրա ևս մեծապես ազդել է պատմիչի՝ քրիստոնյա լինելու և աստվածաբանական հարուստ գիտելիքներով օժտված լինելու պարագան: Այդ իմաստով՝ բնավ պատահական չէ, որ թեպետ «XVI-XVIII դարերը կարելի է համարել վարքագրության անկման շրջան»[2], այնուամենայնիվ, վարքաբանական, ինչպես նաև վկայաբանական հատվածները ևս Դավրիժեցու պատմագրքում մեծ տեղ են գրավում, այնքան, որ առթել են նույնիսկ այսպիսի տեսակետ. «Դավրիժեցու Պատմությունը, ինչպես եղիշեի երկը, ընդհանուր առմամբ ունի վկայաբանական հյուսվածք»[3]:

Ընդգծենք սակայն, որ վարքերն ու հատկապես վկայաբանությունները «Գիրք պատմութեանց» աշխատության ընդհանուր համակարգում չունեն հատուկ կառուցվածքային դերակատարություն և բովանդակային կարևոր արժեք: Այդուհանդերձ, զգացվում է, որ Դավրիժեցին դրանց տվել է նաև հավաստի պատմափաստի նշանակություն, թեպետ երբեմն էլ նկատելի է այն միտումը, որ վկայաբանական գրականությունը նա պարզապես ներբերել է իբրև լրացուցիչ, տպավորություն ստեղծող մաս՝ վկայագրված իրադարձություններին: Ընդ որում՝ ներբերումներն արված են ժանրային ավարտուն ու ամբողջական նկարագրով: Բացի այդ՝ ««Վկայությունների» և «հրաշքների» հետաքրքրաշարժ պատմությունները XVII դարի ընթերցողի համար կարող

1 Մասնավորապես՝ Առաքել Դավրիժեցու Պատմության առումով տե՛ս ***Արքմենիկ Նիկողոսյան*** «Աստվածաշնչյան ինտերտեքստը Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատության կառուցվածքում» հրապարակումը, «Գրականագիտական հանդես», Ա, 2006:

2 ***Քնարիկ Տեր-Դավթյան,*** Վկայաբանություն և վարք, «Հայ միջնադարյան գրականության ժանրեր» գրքում, Երևան, 1984, էջ 89:

3 ***Հենրիկ Բախչինյան,*** XVII-XVIII դարերի հայ գրականությունը, Երևան, 1999, էջ 172:

էին առավել հետաքրքրություն ներկայացնել և բացառված չէ, որ հենց այդ գլուխները մեծ ժողովրդականություն բերեցին «Գիրք պատմութեանցի» առաջին հրատարակությանը: Գիրքը դարձավ հայ ընթերցողի ամենասիրած գրքերից մեկը», – գրում է Լենա Խանլարյանը[1]:

1.

Վկայաբանությունները «Գիրք պատմութեանց»-ում դրսևորվել են հիմնականում իբրև առանձին գլուխներ: Միայն որոշ վկայաբանական հատվածներ են պահպանվել այլ իրադարձությունների ներկայացման համատեքստում, այլ վերնագրերի տակ, իբրև լրացուցիչ տեղեկություններ:

«Գիրք պատմութեանց»-ի հյուսվածքում վկայաբանությունները տարբեր տեղադրություն ունեն, թեպետ որոշակի փուլում դրանք նաև կազմում են հաջորդական շարադրանք՝ «Պատմութիւն նահատակութեան անմեղ մանկանն Նիկողայոսի», «Պատմութիւն նահատակութեան խոստովանող վկային Քրիստոսի սրբոյն Խաչատրոյ», «Պատմութիւն նահատակութեան Սիրուն անուամբ քրիստոնէին», «Պատմութիւն նահատակութեան Մխիթար անուամբ քրիստոնէին», «Պատմութիւն վասն նահատակութեան Աւետիս անուամբ քրիստոնէին» (գլուխ ԽԴ-ԽԸ): Հարկ է նշել, որ սա սոսկական հաջորդականություն է, և այդ գլուխները ոչնչով կապակցված չեն: Ավելին՝ բովանդակային առումով դրանք շատ հազվադեպ են ներդաշնակվում նաև պատմության ընդհանուր շարադրանքին: Հավելենք նաև, որ այդ գլուխները վերաբերում են «Գիրք պատմութեանց»-ի այն մասերին, որոնք, ըստ ամենայնի, չեն մշակվել ու դասակարգվել համապատասխան կերպով:

Հենրիկ Բախչինյանի կարծիքով՝ «Գիրք պատմութեանց»-ում առկա վկայաբանությունները Դավրիժեցին ինքն է «հեղինակել... ընդգրկելով իր Պատմության մեջ»[2]: Եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ «վարքը կամ վկայաբանությունը չեն կարող հորինվել դարեր հետո. դրանք դեպքի անմիջական արձագանքներն են, որ պատմվում են ականատեսների կողմից կամ անմիջականորեն, կամ հուշագրական կարգով», և որ «հետագայում որևէ հեղինակ դրանց կարող է գրական երկի կերպարանք տալ»[3], ապա դա միանգամայն հնարավոր է: Սակայն Լեոյի կարծիքով էլ՝ «ուրիշների գրվածքներ են և այն վկայաբանությունները, որոնք նկարագրում են մասնավոր անձանց նահատակությունները և գրավում են հինգ գլուխ»[4]: Այս դեպքում հստակ եզրահանգման գալ հնարավոր չէ, քանզի Դավրիժեցու պատմագրքում առկա վկայաբա-

1 ***Առաքել Դաւրիժեցի,*** Գիրք պատմութեանց, Երևան, 1990, տե՛ս «Առաջաբանը», էջ 27:
2 ***Հենրիկ Բախչինյան,*** XVII-XVIII դարերի հայ գրականությունը, էջ 169:
3 ***Մայիս Ավդալբեգյան,*** Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը (V դար), Երևան, 1971, էջ 123-124:
4 ***Լեո,*** Հայոց պատմություն, հատոր 3, Երևան, 1946, էջ 364:

նություններն ու ժանրի՝ նույն ժամանակաշրջանին վերաբերող մյուս երևումները ոճական ու պատկերավորման առումով շատ միակերպ են և զգալի չէ անհատական ոճի ներգործություն:

Լևոն Բաբայանի այն նկատումը «Գիրք պատմութեանց»-ում տեղ գտած վկայաբանությունների առիթով, թե «Քրիստոնյաների նահատակությունների նկարագրությունները... գրեթե նույնն են, միայն անուններն են փոխված»[1], վերաբերում է ոչ այնքան Դավրիժեցու դիտավորությանն ու գրական-ստեղծագործական անկարողությանը, որքան հենց այն կարծրակաղապարներին, որոնք տվյալ ժամանակաշրջանում արդեն նկատելի էին վկայաբանական ժանրերի համակարգում, և դրսևորվում էին ոչ միայն կառուցվածքային, այլև բովանդակային հարթություններում:

Կաղապարային է ամենից առաջ վկայաբանությունների վերնագրային պոետիկան՝ ***վասն այսինչ անվամբ քրիստոնյայի նահատակության***: Այսպիսի դեպքերում պատմագրության գլուխների վերնագրերը նաև ժանրային բնորոշումներ են կամ ժանրային պատկանելության ցուցիչներ:

Կաղապարային են նաև ներտեքստային մի շարք միավորներ: Այդ առումով ամենաակնառուն հակիրճ վարքի ու դիմանկարի պարտադիր առկայությունն է վկայաբանության սկսվածքում: Ճիշտ է, դիմանկարն այս պարագային դրսևորվում է իր մասնավոր, այսպես ասած՝ հոգևոր նկարագրի կերտմամբ, բուն դիմանկարային մանրամասնությունները սակավադեպ են, իսկ եղած դեպքերում էլ՝ պարզապես լրացնում են հոգևոր նկարագիրը: Սկսվածքի այդ կաղապարային նրբագծերը հստակ պատկերացնելու համար բերենք երկու տարբեր վկայաբանությունների՝ հերոսներին ներկայացնող մասը. ա)«Այս երանելի նահատակս Նիկողայոս էր ի քաղաքէն Տիգրանակերտու, որ այժմ ասի Ամիթ, ծնեալ և սնեալ ի նոյն քաղաքին, և էր մանուկ տիօք իբրև տասն և հնգից ամաց, տեսլեամբն գեղեցիկ՝ և հասակաւն վայելուչ, զաւակ քրիստոնէից, և ազգաւ ի Հայոց» (էջ 400-401)[2]: բ) «Այս երանելի նահատակս Խաչատուր էր ի քաղաքէն Տիգրանակերտու՝ որ այժմ ասի Ամիթ, ծնեալ և սնեալ ի նմին քաղաքի, և էր ինքն յազգէն Հայոց, և կային սմա ծնողք և եղբարք և այլ ընտանիք բազումք. և էր ինքն իբրև ամաց քսանից՝ աւելի կամ պակաս, գեղեցկատես և վայելչահասակ. այլ և էր յոյժ աղօթասէր և ունկնդիր գրոց ընթերցման, զոր ինչ և կարդան քահանայք յեկեղեցիս...» (էջ 404):

Ծննդավայրերի զուգադիպությունը, ըստ ամենայնի, այս պարագային պատահականություն է, բայց մյուս տեղեկությունները կաղապարային են: Ավե-

1 ***Լևոն Բաբայան,*** Դրվագներ Հայաստանի XIV-XVIII դարերի պատմագրության, Երևան, 1984, էջ 126:

2 ***Առաքել Դավրիժեցի***, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Երևան, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1990: Այս գրքից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստում, բոլոր ընդգծումներն իմն են - Ա.Ն.:

լին՝ որոշ բառային-բնորոշումային համընկնումները վկայում են այն մասին, որ կաղապարայնությունը վերաբերում է նաև վկայաբանությունների տեքստերին, ինչպես՝ «ծնեալ և սնեալ ի նոյն քաղաքին» ↔ «ծնեալ և սնեալ ի նմին քաղաքի», «և ազգաւ ի Հայոց» ↔ «և էր ինքն յազգէն Հայոց», «տեսլեամբն գեղեցիկ՝ և հասակաւն վայելուչ» ↔ «գեղեցկատես և վայելչահասակ»:

Այս կարգի տեղեկություններն ու տվյալները մեկ-երկու բառի փոփոխությամբ առկա են նաև մյուս վկայաբանությունների սկսվածքում: Բերված օրինակներից վերջինը ցուցանում է, թե ինչ բնույթ կարող են ունենալ այդ փոփոխությունները: Նուրբ հնարքով փորձ է արվում քողարկել կաղապարը, այնինչ՝ պարզապես բառակապակցությունները վեր են ածվել բարդ բառերի. ***տես***լեամբն ***գեղ***եցիկ – գեղեցկատես, ***հասակ***աւն ***վայելուչ*** – վայելչահասակ: Այդպիսի քողարկումները դրսևորվում են այլ կառուցվածքներում ևս:

Դմիտրի Լիխաչովի կարծիքով՝ սկսվածքային միավորների նույնական կրկնությունը հեղինակն հատուկ է անում, որպեսզի ընթերցողների ու ունկնդիրների վրա տպավորություն գործելով՝ ամրագրի դրանք: Եվ, ընդհանրապես, մեծ գիտնականը այդ տրամաբանությամբ է վերլուծում հին գրականության բոլոր կրկնվող-կաղապարային միավորները՝ լինեն դրանք բառային, հոմանիշային, թե տեքստային, պատումային[1]:

Կանոնիկ, կաղապարային են նաև վկայաբանությունների սյուժեներն ու սյուժետային զարգացումների մանրամասնությունները: Սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ վկայաբանությունների կառուցվածքի համար, ինչպես գրում է Քնարիկ Տեր-Դավթյանը՝ «հիմք հանդիսացան «իրական ակտերը», որոնք կրում էին զուտ դատական հետաքննության բնույթ՝ կազմված նահատակությանը նախորդող դեպքերի նկարագրությունից և մահապատժից»[2]:

Ըստ ամենայնի՝ սյուժեի կաղապարային բնույթն է հետագայում թելադրել-պայմանավորել նաև մյուս կաղապարները: Հիշարժանն այն է, որ Դավրիժեցու պատմագրքում միմյանց հաջորդող վկայաբանություններից տեքստային ու բովանդակային առումով սերտ համընկնություններ են արձանագրում «Պատմութիւն նահատակութեան անմեղ մանկանն Նիկողայոսի» և «Պատմութիւն նահատակութեան խոստովանող վկային Քրիստոսի սրբոյն Խաչատրոյ» վկայաբանությունները միմյանց հետ, իսկ «Պատմութիւն նահատակութեան Սիրուն անուամբ քրիստոնէին» և «Պատմութիւն նահատակութեան Մխիթար անուամբ քրիստոնէին» վկայաբանությունները՝ միմյանց հետ:

---

1 Առավել մանրամասն տե՛ս *Д. С. Лихачев,* Поэтика древнерусской литературы, Москва, էջ 125-128:

2 ***Քնարիկ Տեր-Դավթյան,*** Վկայաբանություն և վարք, «Հայ միջնադարյան գրականության ժանրեր» գրքում, էջ 44:

Հակիրճ վարքից ու դիմանկարից անմիջապես հետո սկզբնավորվում է բուն սյուժեն, և մի քանի նախադասություն անց կոնֆլիկտ է ստեղծվում քրիստոնյայի ու մահմեդականի միջև: Ընդ որում՝ դա կարող է առաջանալ ամենաչնչին առիթի դեպքում իսկ, և կոնֆլիկտի առիթ միշտ որոնում են մահմեդականները: Այնուհետև հավաքվում է մահմեդականների ամբոխը, և քրիստոնյային տանում են դատարան:

Եթե մինչ այս պահը վկայաբանություններում մանրամասնությունները, ինչպես, օրինակ, կոնֆլիկտի առաջացման պատճառները կարող են լինել տարբեր, ապա սյուժեի զարգացման այսպես կոչված՝ «դատարանային» հատվածը կանոնիկ-կաղապարային է՝ ընդհուպ դատավորի ու դատապարտյալի երկխոսությունը: Քրիստոնյային առաջարկվում է փոխել կրոնը, հակառակ դեպքում՝ մահապատիժն անխուսափելի է: Ընդ որում՝ այդ առաջարկից բացի, տրվում են գայթակղիչ խոստումներ, որոնք միշտ նույն բովանդակությունն ունեն: Բերենք օրինակներ տարբեր վկայաբանություններից. «Ասաց դատաւորն Նիկօղայոսին՝ «...Տամ քեզ ***բազում գանձս և ստացուածս պատուականս, և կին գեղեցիկ***» (էջ 402), «և դատաւորն բազում բանս խոսեցաւ ընդ նմա, և բազում բարութիւնս խոստացաւ տալ նմա՝ ***գանձս և ստացուածս, և կին, և պետական իշխանութիւնս...***» (էջ 405), և այլն: Տարբերությունն այստեղ թերևս այն է, որ դատավորի խոսքը մի դեպքում ներկայացվում է երկխոսության ուղղակի, մյուս դեպքում՝ անուղղակի կերպով:

Քրիստոնյայի՝ դատավորին պատասխանի օրինակներ տարբեր վկայաբանություններից, որոնցում նույնպես առկա են տեքստային համընկնումներ. «Ես ***զլոյս հաւատս իմ ոչ թողում***, և զուղիղ օրէնս Քրիստոսի Աստուծոյ իմոյ ոչ փոխանակեմ ընդ ձերդ օրինաց» (էջ 402), «...ես զՔրիստոս Աստուածն իմ ոչ ուրանամ, և ***զլոյս հաւատս իմ ոչ թողում***, և սուտ ***օրինաց ձերոց ոչ հաւանիմ***» (էջ 405), «***Զլոյս հաւատս իմ ոչ թողում***, և խաւար ***օրինաց ձերոց ոչ հաւանիմ***» (էջ 413) և այլն:

Քրիստոնյայի անդրդվելիությանը հաջորդում են անմարդկային տանջանքները, որոնք տարբեր վկայաբանություններում տարբեր բնույթ են կրում:

Սյուժետային այս մասնավորությանը հաջորդում է ևս մեկ կայուն միավոր, որը թերևս վկայաբանության ժանրաստեղծ կաղապարներից է, քանզի դրանով է հիմնավորվում տվյալ քրիստոնյայի սպանության վկայագրության անհրաժեշտությունը, հետևաբար՝ նաև տվյալ վկայաբանության գոյավորումն իբրև տեքստ: Խոսքը վերաբերում է նահատակի վրա երկնային լույս իջնելու տեսիլներին: Ընդ որում՝ ամեն անգամ նշվում է, որ այդ իրադարձությանը ականատեսներ են եղել: Բերենք օրինակներ տարբեր վկայաբանություններից. այստեղ ևս տեքստային համընկնումներն ակնառու են. «***Եւ ի գիշերին այնմիկ Տէրն Քրիստոս փառաւորեաց զնա երկնային լուսովն, որ էջ***

ի վերայ նորա, զոր քրիստոնեայքն ամենեքեան, որք անդր էին ժողովեալք, ակներեւ տեսին ամենեքեան...» (էջ 403), «Եւ յետ աւանդելոյ հոգւոյն սրբոյ, *փառաւորեաց զնա Տէրն Քրիստոս, զի լոյս պայծառ էր յերկնից ի վերայ նորա,* և յեկաց յօգուտ ժամս. զոր և տեսին զօրականքն, որ մերձն կային և պահէին զնա, այլ և խանութպանք յոլովք, որք մերձ էին և արթունք...» (էջ 409), «*Եւ ի նմին գիշերի Տէրն Քրիստոս փառաւորեաց զնա լուսովն երկնային, որ էջ ի վերայ նորա,* զոր ոչ միայն քրիստոնեայք, այլ և յոլով մահմետականք տեսին» (էջ 414) և այլն:

Տեսիլներին հաջորդում են հրաշքների վկայագրություններ այն մասին, թե ինչպես բազմաթիվ մարդիկ այցելելով նահատակների գերեզմաններին՝ բուժվել են տարաբնույթ հիվանդություններից ու ախտերից:

Պատմագրության ժանրային հյուսվածքում ներառվելով՝ վկայաբանությունը ևս ձեռք է բերում նոր համաբնագրին հարազատ նոր հատկականություններ: Այդ կերպ՝ Դավրիժեցու պատմագրքում ընդգրկված վկայաբանությունների ավարտաբանությունը թվագրում է, թե կոնկրետ որ թվականին և որ օրը տեղի ունեցավ տվյալ վկայի նահատակությունը: Ինչպես՝ «Եւ եղև կատարումն նահատակութեան երանելի առնս Աւետիս ի թուականութեանս մերում ՌՃԵ. յամսեանն մարտի Ի.» (էջ 420–421):

«Վասն նահատակութեան Տէր Անդրէաս քահանային» վկայաբանությունը, որ Դավրիժեցու պատմագրքի ԻԷ գլուխն է միևնույն ժամանակ, տարբերվում է մյուս վկայաբանություններից, թեպետ սրան ևս բնորոշ են որոշ կաղապարային միավորներ: Մանուկ Աբեղյանն էլ առանձնահատուկ վերաբերմունք ունի այս վկայաբանության հանդեպ. «...ամենից գեղեցիկն է, և նախնի վկայաբանությունների հետ կարող է մրցել»[1]: Այն նախ առանձնանում է նրանով, որ իր բովանդակությամբ առնչվում է բուն պատմությանը, և այստեղ հատվում են պատմության մի քանի բովանդակային գծեր՝ կապված Շահ-Աբասի գործունեության, հայերի հանդեպ նրա վարած քաղաքականության, ինչպես նաև Մովսես և Պողոս վարդապետների հոգևոր գործունեության հետ: Այդ պատճառով «Վասն նահատակութեան Տէր Անդրէաս քահանային» գլուխը ստացվել է ավելի շատ պատմական դեպքերի վկայագրություն, քան վկայաբանություն, բայց քանի որ նյութը հարազատ է եղել վկայաբանական գրականությանը, ապա անխուսափելիորեն տեքստ են ներբերվել համապատասխան տարրեր:

Բացակայում են հակիրճ վարքն ու դիմանկարը: Սյուժեն կենտրոնացված ու միատարր չէ, հընթացս ընդգրկում է տեղեկատվական բնույթի հավելումներ: Այստեղ ավելի շատ հերոսի ինքնազոհաբերում է հանուն հանուրի, քան կոնֆլիկտ քրիստոնյայի ու մահմեդականի միջև: Դատարանի տեսարանը բա-

1 *Մանուկ Աբեղյան,* Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, Անթիլիաս, 2004, էջ 449:

ցակայում է, փոխարենը վկային հարցաքննում է անձամբ Շահ-Աբասը: Եվ միայն Շահ-Աբասի ու տեր Անդրեասի հարցուպատասխանն է, որ ինչ-որ առումով կաղապարային է: Հետաքրքիր է, որ բացակայում են նաև տեսիլներն ու հրաշքները:

Ավելորդ չէ նշել, որ տեր Անդրեաս քահանայի նահատակությանը անդրադարձել են նաև Դավրիժեցուց առաջ և մեկ այլ ժանրում: Խոսքը վերաբերում է Ներսես Մոկացու գանձին[1]:

Դավրիժեցու պատմագրքում առկա վկայաբանություններին հատուկ ընդհանուր օրինաչափություններից տարբեր նկարագրով է ներկայանում նաև «Պատմութիւն նահատակութեան մօր Թամրազի, թագաւորին Կախեթու, ի նոյն Շահաբասէ» վերնագրով ԺԲ վկայաբանություն-գլուխը: Նախ՝ սա միակ վկայաբանությունն է Դավրիժեցու պատմագրքում, որտեղ ներկայացվում է քրիստոնյա կնոջ նահատակություն: Բացի այդ՝ այս գլուխը ևս բովանդակային առումով կապվում է պատմության ընդհանուր շարադրանքին, ավելին՝ սյուժետային զարգացման առումով օրգանական շարունակությունն է «Պատմութիւն և պատմառ աւերման աշխարհին վրաց եւ մահուան Լաւասափ թագաւորին նոցա, որ եղև ձեռամբ առաջին Շահաբասին» վերնագրով ԺԱ գլխի: Բացի այդ՝ այս վկայաբանությունը վերաձևվել է զրույցի ժանրային հատկանիշներով: Բացակայում են բազմաթիվ էութային կաղապարներ, ամենից առաջ՝ հակիրճ վարքն ու դիմանկարը, ինչպես նաև սյուժեի, այսպես ասած՝ դատավարական ընթացքը: Քանի որ սյուժեի ընթացքն ավարտվում է քրիստոնյայի նահատակությամբ, ինչը վկայագրության պարագային բնագրաստեղծ, ժանրակազմիչ «արարողություն» է, ապա առկա են վկայաբանական այլ ժանրային տարրեր ևս: Թեպետ Դավրիժեցին վկայագրում է հավաստի իրադարձություններ[2], սակայն դրանք, մինչև «Գիրք պատմութեանցում» ներառվելը, հասցրել են բանավոր պատմվել և ձեռք են բերել գրական, այս պարագային՝ վկայաբանական հատկանիշներ:

Ինչպես թելադրում է վկայաբանության կաղապարը՝ հերոսուհուց պահանջում են ուրանալ քրիստոնեությունն ու մահմեդական հավատին դառնալ, ինչը, բնականաբար, մերժվում է: Հերոսուհու մերժողական պատասխանը ևս տեքստային առումով կանոնիկ-վկայաբանական է. «Եթէ զիս անգամ յօշեն, ես ոչ թուլանամ ի սիրոյն Քրիստոսի և ոչ դառնամ ի նորին հաւատոցն» (էջ 145):

---

1 «Գանձ նոր նահատակին և սուրբ քահանային Անդրէասի Նախձաւանցւոյ, որ կատարեցաւ ի Շահ-Աբասէն. ասացեալ շնորհալի վարդապետին Բեղլու Ներսէս կոչեցեալ Մոկացի», տե՛ս ***Ներսես Մոկացի,*** Բանաստեղծություններ, Երևան, 1985, էջ 36-48:

2 Դրանք հաստատվում են նաև վրացական տարբեր աղբյուրներով, թեպետ տարբերություններ, շեղումներ, տարընկալումներ, անշուշտ, առկա են: Այդ մասին մանրամասն տե՛ս ***Առաքել Դաւրիժեցի,*** Գիրք պատմութեանց, էջ 510-511, թիվ 57-62 ծանոթագրությունները:

Սրան, կրկին նույն կաղապարային թելադրանքով, հաջորդում են անմարդկային տանջանքները, բայց հերոսուհին մնում է անդրդվելի ու նահատակվում է:

Ինչպես արդեն նշել ենք, «Գիրք պատմութեանցի» հյուսվածքում իբրև գլուխ տեղադրությունից բացի, որոշ վկայաբանություններ դրսևորվում են նաև այլ բովանդակությամբ ու ժանրային նկարագրով գլուխների համատեքստում: Այդպիսի դեպքերում վկայաբանությունը իբրև ժանր որոշակի տարտղնումներ ու վերաձևություններ է արձանագրում: Նույնիսկ կարելի է ասել, որ այդ դրսևորումներում պարզապես պահպանվում է տվյալ ժանրի մասին հիշողությունը: Գրիգոր անունով քրիստոնյայի մասին պատմությունն, օրինակ, որն ընդգրկված է «Միւս պատմութիւն նեղութեանց, զոր կրեցին ազգն Հայոց յառաջնոյ Շահաբաս թագաւորէն» վերնագրով ԺԴ գլխում, զրուցատիպ է, բայց նրանում գերակշիռ տեղ են զբաղեցնում նաև վկայաբանական տարրերը: Սա հետաքրքիր նմուշ է այն առումով, որ ցուցանում է ժանրի անհետացման կամ վերաձևման ընթացքի նրբությունները:

«Այր ոմն քրիստոնեայ՝ անունն Գրիգոր» սկսվածքն արդեն վկայաբանական է, և վերևում տեսանք, որ այդ կարգի բնութագրումները ծառայում են իբրև վկայաբանությունների վերնագրերի կաղապարային տարրեր: Այսինքն՝ վերնագիրը վերածվում է սկսվածքի: Այնուհետև հաջորդում են հակիրճ վարքն ու դիմանկարը, բայց էլ ավելի հակիրճ ու կարճառոտ: Բովանդակային կաղապարներն առանց բացառության առկա են. Գրիգորին մեղադրում են մահմեդականի սպանության մեջ, ապա տանում դատարան, որտեղ նրան մեղավոր ճանաչելով՝ դատապարտում են մահվան: Նախքան սպանությունը Գրիգորի առջև հավատուրացության խնդիր է դրվում, ինչը, բնականաբար, հերոսականորեն մերժվում է: Վկայի մարմնի վրա լույս է իջնում, որը տեսնում են շատ մարդիկ:

Տարբերությունն այս դեպքում այն է, որ սյուժեն ենթարկված է զրույցի ժանրին բնորոշ նպատակասլացության ու կարճառոտության թելադրանքին: Այնպիսի մանրամասնություններ, ինչպիսիք են, օրինակ, դատարանային մասի երկխոսությունները, հասցված են նվազագույնի:

Վկայաբանությունների ավարտուն և ամբողջական դրսևորումների հետ մեկտեղ Դավրիժեցու պատմագրքում հաճախ են հանդիպում բարոյաբանական բնույթի հատվածներ, դատողություններ, գնահատականներ, որոնք, անշուշտ, թելադրված են վկայաբանական գրականության ոգուց ու ոճից: Այդպես՝ պատմելով այն մասին, թե ինչպես էին պարսիկները անխնա կոտորում հայ բնակիչներին, Դավրիժեցին իրենց կամավոր կերպով անսահման բարձրությունից վայր նետող աղջիկների արարքը բացատրում-պատճառաբանում է հետևյալ կերպ՝ «...վասն որոյ լաւ համարեալ զսրբութեամբ մահն իւրեանց քան զապրուստ սուղ ինչ ժամանակեայ կենաց, որ այն ևս մեղօք և չարակրութեամբ...» (էջ 86):

2.

Այն հանգամանքը, որ բուն առումով ***վարքերը*** բացակայում են Առաքել Դավրիժեցու պատմագրքում և, ընդհանրապես, ուշ միջնադարում, Քնարիկ Տեր-Դավթյանը բացատրում է նրանով, որ «XVI – XVII դդ. վարքագրության մեջ... փոխվում է նաև ***վարք*** բառի, որպես սրբի ամբողջական կենսագրության իմաստը: Այն ստանում է ավելի նեղ նշանակություն և սկսում է վերաբերել միայն կենցաղավարությանը» (ընդգծումը բնագրում – Ա.Ն.)[1] :

Դավրիժեցու պատմագրքում վարքերը ևս հիմնականում դրսևորվել են առանձին գլուխների տեսքով, թեպետ կարճառոտ կամ հակիրճ վարքեր նույնպես հանդիպում են՝ հատկապես զրույցներում ու վկայաբանություններում: Դրանք ընդգրկում են մասնավոր ու ընդհանրական բնույթի կենսագրական տվյալներ:

«Գիրք պատմութեանցում» վարքեր են «Պատմութիւն առաքինագործ արանց Սարգիս եպիսկոպոսին և տէր Կիրակոսին, որք եղեն սկիզբն շինելոյ և հաստատելոյ անապատաց: Որովք և պատճառք ամենայն բարեկարգութեան վանօրէից և եկեղեցեաց և նոցին բնակողաց» վերնագրով ԻԱ, «Պատմութիւն վարդապետութեան և վարուց սրբոյ վարդապետին Պօղոսի» վերնագրով ԻԳ, «Վասն վարդապետութեան և կաթուղիկոսութեան տեառն Մովսիսի: Ընդ որում և յաղագս նորոգութեան լուսակառոյց սրբոյ Աթոռոյն Էջմիածնի» վերնագրով ԻԴ, «Վասն վարդապետութեան և կաթուղիկոսութեան տեառն Փիլիպպոսի: Յորում և վասն նորոգութեան եկեղեցեաց սրբուհի կուսանացն Գայիանեայ և Հռիփսիմեայ և յայտնելոյ նշխարաց նոցին» վերնագրով ԻԵ գլուխները: Այս գլուխ-վարքերի ներսում սյուժետիկ ընթացքով զրուցանման պատմություններ էլ կան, բայց դրանք վարքագրվող հերոսի սրբությունը վկայող-հաստատող հնարքներ են:

Գլուխ-վարքերն իրենց բովանդակությամբ հիմնականում կապվում են պատմության բուն շարադրանքին, քանզի Դավրիժեցին առավելապես ներկայացնում է հայոց կաթողիկոսների կենսագրությունն ու գործունեությունը, իսկ պետականությունը կորցրած հայ ժողովրդի ղեկավարները բոլոր առումներով, փաստորեն, նրանք էին, և նրանք էին այս կամ այն հարցով հարաբերվում Շահ-Աբասի ու նրա պաշտոնյաների հետ:

Ներհյուսվելով բուն պատմությանը՝ վարքերի՝ հիմնականում անսյուժե պատումը ձեռք է բերում նաև այդպիսի հատկանիշներ:

Վարքերում էլ կան կաղապարային միավորներ, բայց դրանք որակ չեն կազմում և հիմնականում վերաբերում են վարքագրության հերոսի կատարած հրաշագործություններին: Ինչպես կարելի է անմիջապես նկատել, գլուխ-վար-

---

1 ***Քնարիկ Տեր-Դավթյան,*** Վկայաբանություն և վարք, «Հայ միջնադարյան գրականության ժանրեր» գրքում, էջ 86:

քերի վերնագրերում տվյալ անձնավորության գործունեության մասնավոր մի դրվագն առանձնահատուկ շեշտված է: Դա կազմում է վարքագրության հերոսի գործունեության այսպես կոչված՝ պսակը:

Եթե 5-րդ դարում Մաշտոցի վարքը հեղինակելիս Կորյունի իրավասությունները տատանվում էին սուրբ-ոչ սուրբի սահմանագծում, ապա վարքագրության զարգացման հետագա շրջաններում խոսքն արդեն վերաբերում էր հիմնականում հոգևորական-աշխարհիկ հարաբերություններին: Սա ընդունված կարգ էր: Եվ ահա «...Դավրիժեցին շեղվելով ընդունված կարգից, պարտ է համարել նաև գրելու իր ժամանակի որոշ աշխարհականների կենսագրությունը...»[1]: Ճիշտ է, նրանց կենսագրության վկայագրմանը Դավրիժեցին իր պատմագրքում առանձին գլուխներ չի նվիրել, բայց փաստն ինքնին արժանի է ուշադրության: Խոսքը վերաբերում է վարպետ Մինասի և վարպետ Հակոբջանի վարքերին, որոնք ընդգրկված են «Թէ ո՞րք և որպէ՞ս եղեն պատճառք գտանելոյ զոմս և զգիտութիւնս արտաքին գրոց և զարուեստս քերականութեան և նորոգեալ սփռեցին ի վարդապետս Հայոց, որ բնաւին բարձեալ և անհետ էր լեալ» վերնագրով ԻԹ գլխում: Ընդունված կարգից այդ «շեղումը» Դավրիժեցին պատճառաբանում է հետևյալ կերպ. «Այլ և պարտ վարկանիմ մեզ ականատես եղելոցս ոչ զանց առնել և այլովք ևս շնորհալից արամբք. ***թէպէտ և են աշխարհականք, այլ զի են հաւատով քրիստոնեայք և յազգէս Հայոց, որք են պարծանք և օգուտ մերում ազգի»*** (էջ 321):

Դավրիժեցու աշխարհայացքի կարևորագույն կողմերը՝ կրոնասիրությունն ու հայրենասիրությունը, այս դրվագում երևում են առավել ընդգծված:

---

1 ***Հենրիկ Բախչինյան,*** XVII-XVIII դարերի հայ գրականությունը, էջ 172: